ՀԻՆ ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Պատմության ինստիտուտում հիմնադրման առաջին իսկ տարիներից արդյունավետ աշխատանքներ են տարվել Հայաստանի հնագույն ժամանակաշրջանի պատմության առանցքային մի շարք հիմնախնդիրների լուսաբանման ուղղությամբ: Ինստիտուտի Հին և Միջին դարերի պատմության բաժնի թեմատիկան ի սկզբանե աչքի էր ընկնում իր բազմազանությամբ. մշակույթ, քաղաքական պատմություն, աղբյուրագիտություն, պատմական աշխարհագրություն և քարտեզագրություն: Բաժնի վարիչ Սուրեն Երեմյանին է պատկանում Հին Հայաստանի հասարակարգի գիտական պարբերացումը: Նրա գիտական հետազոտությունների շրջանակն ընդգրկել է հայ ժողովրդի կազմավորումից մինչև ուշ միջնադար հասնող ժամանակաշրջանի Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմության, պատմական աշխարհագրության ու քարտեզագրության, հայ-վրացական, հայ-բյուզանդական հարաբերությունների, կովկասագիտության խնդիրները: 1950-ական թթ. հրատարակած մի քանի աշխատություններում նա ցույց է տվել, որ հայ ժողովրդի կազմավորումն ընթացել է Հայկական լեռնաշխարհում: 1963 թ. հրատարակվել է Ս. Երեմյանի «Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի» մենագրությունը, որում հեղինակը բացահայտել է հայ իրականության սահմաններից դուրս եկող և համաշխարհային նշանակություն ունեցող V–VII դդ. պատմական աշխարհագրության՝ այդ կարևոր սկզբնաղբյուրի արժեքը: Պատմաբանը բարձր է գնահատել նշված ստեղծագործությունը՝ ցույց տալով, որ, երբ Եվրոպայում գիտական միտքը նահանջ էր ապրում, Հայաստանում ոչ միայն պահպանվում, այլև առաջադիմում ու զարգանում էին անտիկ գիտությունների ավանդույթները: Պատմական աշխարհագրության և, հատկապես, պատմական տեղագրության մասին Ս. Երեմյանի գիտելիքների հարուստ պաշարը նրան հնարավորություն են տվել այդ աղբյուրին նվիրված ուսումնասիրություններում վերականգնել Մեծ Հայքի և հարակից երկրների ու ցեղերի VII դ. քարտեզը:

Հին դարերի բաժնի աշխատակիցներից Մ. Իսրայելյանը, Հ. Ղարագյոզյանը և այլք, զբաղվել են Վանի թագավորության (Ուրարտու) պատմության տարաբնույթ հարցերով: Մ. Իսրայելյանն ուսումնասիրել է Վանի թագավորության հատուկ անունները: Հայտնի է նրա «Դիվան ուրարտական արձանագրությունների» աշխատությունը: Հիմնախնդրի վերաբերյալ հանգուցալուծման է հասել երկու թեմաների մշակումը՝ «Ուրարտական աստվածների պաշտամունքը և նրա տեղը հին արևելյան պաշտամունքների մեջ» (Մ. Իսրայելյան) և «Վանա ծովի ավազանի ուրարտական երկու մարզերի պատմությունը» (Հ. Ղարագյոզյան): Հետազոտվել են «Հայաստանի և հարևան երկրների պետական կարգը հելլենիստական ժամանակաշրջանում» (Գ. Սարգսյան), «Պլինիոս Ավագը Հայաստանի և հայերի մասին» (Ս. Կրկյաշարյան), «Վաղմիջնադարյան հայ պատմագրության կապերը ասորական պատմագրության հետ» (Հ. Մելքոնյան)

թեմաները։ Բաժնում աշխատանքներ են տարվել նաև վաղ միջնադարի հայ գրականության գիտական մատենագիտության՝ «Հայկական մատենագիտությունը (5–18-րդ դդ.)» բազմահատոր հրատարակության երրորդ հատորի ուղղությամբ։

Ինստիտուտի միացյալ Հին և Միջին դարերի պատմության բաժինը 1966 թ. տրոհվեց երկու՝ Հին և Միջին դարերի բաժինների։ Հին դարերի պատմության բաժնի վարիչ նշանակվեց Գագիկ Սարգսյանը։ Վերջինս բուհական և ասպիրանտական ուսումնառությունն անցել էր Ս.-Պետերբուրգի համալսարանի պատմության ֆակուլտետում և ԽՍՀՄ ԳԱ պատմության ինստիտուտի Ս.-Պետերբուրգի բաժանմունքում։ Դեռևս 1960 թ. Մոսկվայում հրատարակվել էր Գ. Սարգսյանի կարևոր աշխատություններից մեկը, որը մեծ հետաքրքրություն էր առաջացրել մասնագետների շրջանում։ Այն նվիրված էր Տիգրանակերտին. Հին Հայաստանի մայրաքաղաքի պատմության հարցերը հեղինակը քննության էր առել հելլենիստական Առաջավոր Ասիայի քաղաքների պատմությանը զուգահեռ և ընդգծել էր դրանց զարգացման օրինաչափություններն ու առանձնահատկությունները։ Գ. Սարգսյանն անդրադարձել էր Հին Հայաստանի քաղաքային համայնապատկերների, ներկայացրել դրանց իրավական վիճակը։ Պատմության ինստիտուտը 1962 թ. հրատարակել է Գ. Սարգսյանի մեկ այլ աշխատություն՝ նվիրված Հին Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման ուղիներին։ Այս աշխատությունում հեղինակը վեր է հանել Հայաստանի և Փոքր Ասիայի, Միջագետքի ու Պարսկաստանի զարգացման ուղիների նմանությունները՝ մատնանշելով նաև դրանց տարբերությունները։ Գ. Սարգսյանի գիտական գործունեությունում առանձնահատուկ տեղ են գրավում Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկին նվիրված հետազոտությունները։

Խորհրդահայ պատմագիտության մեջ Գ. Սարգսյանի կարևոր ներդրումը հանդիսացավ ինստիտուտի հրատարակած «Հայ ժողովրդի պատմություն» բազմահատորյակի առաջին հատորի համապատասխան բաժինը, որտեղ նա առաջադրել է Հին Հայաստանի պատմության վերաբերյալ մի շարք հարցադրումներ. դրանք վերաբերում էին հելլենիստական դարաշրջանի Մեծ Հայքի, Փոքր Հայքի, Ծոփքի ու Կապադովկիայի հայկական թագավորություններին, Արտաշես Ա-ի և Տիգրան Բ Մեծի իրականացրած տնտեսական, քաղաքական ու վարչական բարեփոխումներին։

Հին դարերի պատմության բաժնի աշխատակից Ս. Կրկյաշարյանն ուսումնասիրել է Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների, Հին Հայաստանի պետական կառուցվածքի, սոցիալ-քաղաքական պատմության, հայ-հունական, հայ-հռոմեական, հայ-սասանյան հարաբերությունների ոլորտները՝ սկսած մ.թ.ա. VI դ. մինչև Հայաստանում Արշակունյաց թագավորության անկումը։ Ս. Կրկյաշարյանը հատուկ ուշադրություն է դարձրել Գառնիում և Արմավիրում հայտնաբերված հունարեն վիմագիր արձանագրություններին։ Նրա գիտական գործունեության առանձին ուղղությունն էր անտիկ հույն հեղինակների դասական գործերի հայերեն թարգմանությունը, որով հիմք դրվեց «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» մատենաշարի «Հին հունական աղբյուրներ» շարքին։ Ս. Կրկյաշարյանի արդյունավետ աշխատանքի

շնորհիվ հին հունարենից հայերեն թարգմանվեցին Հոմերոսի, Դիոն Կասիոսի, Հերոդոտոսի, Քսենոփոնի, Հովսեպոս Փլավիոսի և այլ հեղինակների պատմական երկեր:

1971 թ. Հին դարերի պատմության բաժնի վարիչի պաշտոնում նշանակվեց Սուրեն Երեմյանը: Վերջինիս ջանքերով նույն թվականին հրատարակվեց «Հայ ժողովրդի պատմություն» ակադեմիական բազմահատորյակի I հատորը, որի պատասխանատու խմբագիրը և շարադրանքի զգալի մասի հեղինակը Ս. Երեմյանն էր:

1970–80-ական թթ. բաժնի աշխատանքներն ընթացել են հետևյալ հիմնական ուղղություններով.

- Հայ ժողովրդի ծագման ու կազմավորման հիմնախնդիրը
- Հին Հայաստանի սոցիալ-տնտեսական և հասարակական կարգը
- Հին Հայաստանի քաղաքական պատմության խնդիրները
- Հին Հայաստանի պատմության աղբյուրագիտությունը
- Օտար լեզուներով գոյություն ունեցող հայ ժողովրդի պատմությանը վերաբերող բնագրերի թարգմանությունը հայերեն
- Հայաստանի և հարևան երկրների պատմական աշխարհագրությունը և քարտեզագրությունը:

Որպես առաջնային խնդիրներ առանձնացվել էին Հին Հայաստանի հոգևոր մշակույթի և աղբյուրագիտական ուսումնասիրությունները: Օտար աղբյուրների մատենաշարից բացի, ուշադրության է արժանացել նաև վաղ միջնադարյան հայ մատենագրության ուսումնասիրությանը, որն ուղղակի կամ անուղղակի կապվում է Հայոց պատմության հին շրջանի հետ:

Բաժնի աշխատակից Հայկ Մելքոնյանը զբաղվել է հայ-ասորական հարաբերությունների լուսաբանմամբ: Այս թեմայի շրջանակներում լույս է տեսել նրա «Ասորական աղբյուրները հայերի ու Հայաստանի մասին» աշխատությունը, որը «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» մատենաշարի հերթական հատորներից մեկն էր: Հ. Մելքոնյանը 1980 թ. հրատարակել է «Ադիաբենե պետությունը և Հայաստանը» մենագրությունը, որում անդրադարձել է Ադիաբենեի և Հայաստանի քաղաքական ու մշակութային կապերին:

1970-ական թթ. ուսումնասիրվել է Վանի, Երվանդունիների և Արտաշիսյանների, հայ Արշակունիների թագավորությունների քաղաքական կարգը, շարունակվել են աշխատանքները Հայաստանի և հայերի մասին օտար, մասնավորապես՝ բյուզանդական աղբյուրները հրատարակության պատրաստելու ուղղությամբ:

1977 թ. լույս է տեսել բաժնի գիտաշխատող Ժ. Էլչիբեկյանի «Հայաստանը և Սելևկյանները» աշխատությունը, որում ներկայացվել է Հին Հայկական պետության և Սելևկյան տերության գրեթե երկուսուկես դար տևած փոխհարաբերությունների պատմությունը:

1980 թ. Հայաստանի աշխարհագրական ընկերության նախագահության նիստին Ս. Երեմյանը ընտրվել է նախագահության անդամ և պատմական աշխարհագրության ու քարտեզագրության բաժնի վարիչ: Ի թիվս բազում քարտեզների, Ս. Երեմյանը հրատարակել է երկու մե-

ծաղիր պատմական քարտեզ՝ «Հայկական պետությունը Տիգրան Մեծի ժամանակաշրջանում (մ.թ.ա. 83–66)» և «Մեծ Հայքի թագավորությունը IV դարում (298–385)»:

Բաժնի գիտաշխատող Ռ. Մանասերյանը հրատարակել է «Տիգրան Մեծ. Հայաստանի պայքարը Հռոմի և Պարթևստանի դեմ մ.թ.ա. 94–64 թթ.» մենագրությունը՝ Տիգրան Մեծի ժամանակաշրջանի Հայաստանի քաղաքական վերելքին և միջազգային հարաբերություններին նվիրված ուսումնասիրություն, որի առանցքը կազմել են հայ-հռոմեական, հայ-պարթևական առնչությունները և Հայաստանի քաղաքական-գաղափարաբանական առանձնահատկությունները:

Հայ-ալանական հարաբերությունների հետազոտությամբ էր զբաղվում Ռ. Գաբրիելյանը՝ 1989 թ. հրատարակելով «Հայ-ալանական հարաբերությունները (1–10-րդ դդ.)» մենագրությունը: Աշխատությունում, ըստ հայկական աղբյուրների, քննության են առնվել նշված ժամանակաշրջանի հայ-ալանական ռազմաքաղաքական հարաբերությունները, ինչպես նաև ալանների սոցիալական պատմության հարցերը: Մեծ Հայք-Կոմմագենե կապերն է հետազոտել Ե. Մարգարյանը: Հունա-հռոմեական և հայկական աղբյուրների, ինչպես նաև վիմական արձանագրությունների ընձեռած տվյալներով նա լուսաբանել է Հայկական լեռնաշխարհի և նրան հարող երկրների քաղաքական պատմությունը, այդ երկրների մղած պայքարը Հռոմի դեմ:

Գ. Վարդումյանը 1991 թ. հրատարակել է «Հայոց նախաքրիստոնեական պաշտամունքը» աշխատությունը, որը նվիրված է հին հայկական կրոնի, մասնավորապես՝ դիցարանի համակարգմանը, ինչպես նաև հայ-հունական, հայ-պարսկական և այլ պատմամշակութային առնչությունների, հեթանոսության և քրիստոնեության բնականոն կապի, հին հավատալիքների վերապրուկների հարցերի ուսումնասիրմանը: Է. Դանիելյանը հետազոտել է «Հայ-բյուզանդական հարաբերությունները պարսկաբյուզանդական հակամարտության մայրամուտին և արաբաբյուզանդական հարաբերությունների սկզբնական ժամանակաշրջանում» թեման: Վ. Խաչատրյանը 1991 թ. ավարտել է «Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմտյան շրջանները ըստ սեպագրական աղբյուրների» աշխատությունը:

Հայաստանի անկախության վերականգնումից հետո Հին դարերի պատմության հիմնախնդիրների ուսումնասիրությունը դրվեց նոր հիմքերի վրա: Ս. Երեմյանից հետո՝ 1992 թ. մինչև 2008 թ., բաժինը ղեկավարեց ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ Ս. Կրկյաշարյանը, որին փոխարինեց պ.գ.դ., պրոֆ. Է. Դանիելյանը:

Բաժնի աշխատակիցներն ուսումնասիրություններ են հրատարակել հնագույն հայկական պետական կազմավորումների, Վանի թագավորության, Երվանդունիների, Արտաշիսյան դարաշրջանի Հայաստանի (Ս. Կրկյաշարյան, Է. Դանիելյան, Վ. Խաչատրյան, Գ. Վարդումյան, Ռ. Մանասերյան, Ե. Մարգարյան, Ա. Ղարագյոզյան և ուրիշներ) վերաբերյալ: Ս. Կրկյաշարյանը հայերեն թարգմանությամբ հրատարակել է Քսենոփոնի «Կյուրոպեդիա», «Սոկրատյան երկեր», Պլուտարքոսի «Կենսագրություններ» գործերը: Այս երկերն արժեքավոր տեղեկություններ են պարունակում հայ ժողովրդի հին շրջանի պատմության և մշակույթի վերաբերյալ:

Հայագետները շարունակել են Հայասա երկրի՝ հայ ժողովրդի բնօրրանի ուսումնասիրությունը: Հնդեվրոպական «նախահայրենիքը» Առաջավոր Ասիայում դիտարկելու տեսության

լույսի ներքո հայ ժողովրդի տեղաբնիկության խնդրի ուսումնասիրությունն իրականացվել է ինստիտուտում ստեղծված «Հայ ժողովրդի կազմավորումը և հայոց պետականության առաջացումը Հայկական լեռնաշխարհում» գիտական թեմատիկ խմբում (Է. Դանիելյան, Գ. Վարդումյան, Վ.Խաչատրյան):Հայ ժողովրդի կազմավորման և հայոց պետականության առաջացման խնդրի հետազոտման արդյունքները քննարկվել են 1993 թ.ապրիլին հրավիրված գիտական նստաշրջանում:

1998 թ. «Հին Հայաստանի պետականության պատմություն» թեմայի շրջանակներում հրատարակվել է Վ. Խաչատրյանի «Հայաստանը մ.թ.ա. XV–VII դարերում. Հայոց հին պատմություն» մենագրությունը: Հեղինակը խեթական, ասորական, բիայնական սեպագիր աղբյուրների և Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ի համապատասխան նյութի համեմատական վերլուծությամբ պարզում է, որ Հայոց պետականության մասին վաղնջական վկայությունները վերաբերում են մ.թ.ա. XV դարի վերջին:

1998 թ. լույս է տեսել Քսենոփոնի «Կյուրոպեդիա» աշխատությունը՝ հունարենից հայերեն Ս. Կրկյաշարյանի թարգմանությամբ և ծանոթագրություններով: 2000 թ. հրատարակվել Է. Դանիելյանի «Հայաստանի քաղաքական պատմությունը և հայ Առաքելական եկեղեցին (VI–VII դդ.)» մենագրությունը: Լույս է ընծայվել նաև Ս. Կրկյաշարյանի «Հին Հայաստանի պետական կառուցվածքը (մ.թ.ա. VI – մ.թ. IV դդ.)» արժեքավոր մենագրությունը, որում հայկական և օտարալեզու սկզբնաղբյուրների հիման վրա հեղինակը ներկայացնում է հիմնահարցի ամբողջական պատմությունը: Աշխատանքը մեծ ներդրում է հայ պատմագիտության մեջ:

2003 թ. սեպտեմբերին տեղի է ունենում «Հայագիտության արդի վիճակը և զարգացման հեռանկարները» միջազգային հայագիտական առաջին գիտաժողովը, որտեղ, ի թիվս այլ զեկուցողների, Է. Դանիելյանը հանդես է գալիս «Հին Հայաստանի պատմության հայեցակարգային հիմնահարցերը պատմագրության մեջ» զեկուցումով: 2005 թ. տպագրվում են նրա «Գանձասարի վանքի պատմությունը», իսկ 2009-ին՝ «Գանձասարի վանքը» գրքերը:

Բաժնի գիտաշխատողներ Է. Դանիելյանը, Ե. Մարգարյանը, Գ. Վարդումյանը, Վ. Խաչատրյանը, Ա. Ղարագյոզյանը, Կ. Թոխաթյանը, ասպիրանտ Ռ. Ղազարյանը մասնակցել են «Հայկական լեռնաշխարհը Հայոց և համաշխարհային քաղաքակրթության բնօրրան» (2003 թ., նոյեմբերի 13–15) և «Հին Հայաստանի ժողովրդագրության հարցեր» (2004 թ., հունիսի 17–19) գիտաժողովներին:

Բաժնի վարիչ Է. Դանիելյանը հետազոտել է հին և վաղմիջնադարյան Հայաստանի քաղաքակրթական զարգացումների և հայ ժողովրդի տեղաբնիկության, ինչպես նաև պատմաաշխարհագրական հարցերը: Վ. Խաչատրյանը հետազոտել է սեպագիր աղբյուրներում հայկական տեղանունները: 2012 թ. լույս է տեսել նրա «Հայկական տեղանունները սեպագիր աղբյուրներում» մենագրությունը: Հոգևոր մշակույթի հարցերի բազմակողմանի հետազոտությամբ է զբաղվել Գ. Վարդումյանը: Հենվելով տարաբնույթ աղբյուրների (հնագիտական, բանահյուսական, լեզվական, մատենագրական, ազգագրական) ընձեռած նյութի հիման վրա, նա քննության է առնում հին Հայոց դիցաբանության ու առասպելաբանության, նախաքրիստոնեա-

կան ու քրիստոնեական հավատքի հարցերը՝ պատմամշակութային կտրվածքով, ինչպես նաև լուսաբանում է անցյալի ավանդույթների դրսևորումները ներկայիս սովորութակարգում: Ա. Ղարագյոզյանը զբաղվել է Հայկական լեռնաշխարհի երկրամասերի պատմաաշխարհագրական ուսումնասիրությամբ և տեղանունների ստուգաբանությամբ: Նա հրատարակել է «Ժողովրդագրական տեղաշարժերը Հայաստանում մ.թ.ա. 2-րդ – մ.թ. 15-րդ դարերում», «Գեղամա երկիր», «Գարդման», «Սյունիք, Նախիջևան և Գողթն» մենագրությունները: Ե. Մարգարյանը զբաղվել է հելլենիստական քաղաքակրթության հարցերով: Նա քննության է առել Կոմմագենեի կրոնական ու գաղափարախոսական քաղաքականության հարցերը հելլենիստական դարաշրջանում: Կ. Թոխաթյանը զբաղվում է ՀՀ տարածքում ժայռապատկերային հնավայրերի հայտնաբերմամբ և ժայռապատկերների դասակարգմամբ՝ ըստ թեմատիկայի և բովանդակության, նաև Հայկական լեռնաշխարհի ժայռապատկերներում հին հայոց տիեզերագիտական պատկերացումների արտացոլման ուսումնասիրությամբ, առաջադրելով թվագրման նոր մեթոդներ: Ա. Մուշեղյանը կատարում է հետազոտություններ հայ դրամագիտության ասպարեզում:

Հին դարերի բաժինը 1997 թվականից համագործակցում է CNRS-ի (Ֆրանսիա), Բրիտանական թանգարանի, Օքսֆորդի, Քեմբրիջի թանգարանների դրամագիտության բաժինների հետ: CNRS-ի հետ համագործակցելով՝ Ա. Մուշեղյանը հրատարակել է դրամագետ Խ. Մուշեղյանի անտիպ ձեռագիր աշխատությունները: Նա մասնակցել է Վիեննայի Մխիթարյան միաբանության 200-ամյակին նվիրված գիտաժողովին: Ա. Դումիկյանը զբաղվում է XIX դ. ֆրանսիական հայագիտության մեջ Հայոց հին և վաղմիջնադարյան պատմության հիմնահարցերի ուսումնասիրությամբ:

Հին դարերի պատմության բաժնի կողմից արձանագրված հաջողությունների շարքում անհրաժեշտ է նշել «Ծովի մշակույթը՝ մարդկության մշակույթն է քաղաքակրթությունների երկխոսությունում» (2010) և «Հայոց քաղաքակրթական ժառանգությունը և Մետաքսի ճանապարհը» (2011) խորագրերով կազմակերպված միջազգային գիտաժողովների մասին: Դրանց մասնակցել են Է. Դանիելյանը, Գ. Վարդումյանը, Ա. Մուշեղյանը, Կ. Թոխաթյանը, Ե. Մարգարյանը և Ա. Դումիկյանը:

Հին դարերի պատմության բաժնի աշխատակիցների գործուն մասնակցությամբ 2015 թ. հունիսի 3-ից 4-ը ՀՀ ԳԱԱ նախագահության դահլիճում կազմակերպվեց միջազգային գիտաժողով՝ նվիրված նշանավոր դրամագետ Խաչիկ Մուշեղյանի հիշատակին: Մեծ Բրիտանիայի, Ավստրիայի, Ռուսատանի, Վրաստանի, Հայաստանի գիտական կենտրոնները ներկայացնող գիտնականների մի խումբ ելույթ ունեցան արժեքավոր գիտական զեկուցումներով:

2016–2017 թթ. բաժինը շարունակեց հետազոտություններ կատարել Հայկական լեռնաշխարհում ավելի քան հինգհազարամյա էթնո-հոգևոր ակունքներ ունեցող տեղաբնիկ ժողովրդի մշակութային զարգացումների, Հայոց ազգածագման և պետականության, քաղաքական պատմության, պատմական աշխարհագրության և բազմաթիվ այլ ասպարեզներում: Բաժնի աշխատակիցները զգալի ներդրում ունեցան ինստիտուտի կողմից 2017 թ. «Օտարազգի հայագետնե-

րի ավանդը Հայաստանի հին և միջնադարյան պատմության ուսումնասիրության բնագավառում (միջազգային գիտաժողովի նյութեր)» ժողովածուի հրատարակման գործում:

2017 թ. վերջին Հին դարերի պատմության բաժնի վարիչի պաշտոնը ստանձնեց Հայկ Հակոբյանը: Նրա հեղինակած շուրջ 150 գիտական հոդվածները, մենագրությունները, վերաբերում են անտիկ Հայաստանի պատմական աշխարհագրությանը, դրամագիտությանը, ճարտարապետությանը, ռազմական արվեստին, թաղման կառույցներին ու ծեսերին, անտիկ դարաշրջանից դեպի վաղ միջնադար, հին հեթանոսական աշխարհայացքից դեպի քրիստոնեություն անցման, հայ-հռոմեական տնտեսական ու մշակութային առնչությունների, պատմագիտության մեթոդաբանության, հին արվեստի և պատկերագրության, վիմագրության և արվեստի տեսության խնդիրներին:

Բաժնի գիտական աշխատանքներն իրականացնում են. բաժնի վարիչ՝ պ.գ.թ., դոցենտ Հ. Հակոբյան, առաջատար գիտաշխատողներ՝ պ.գ.թ., դոցենտ Գ. Վարդումյան, պ.գ.թ. Վ. Խաչատրյան, ավագ գիտաշխատող՝ պ.գ.թ. Ա. Ղարագյոզյան, գիտաշխատողներ՝ պ.գ.թ. Ա. Դումիկյան, Կ. Թոխաթյան, կրտսեր գիտաշխատողներ՝ Ա. Մուշեղյան, Վ. Սարգսյան, Հ. Խուդանյան, ավագ լաբորանտ՝ Ա. Ղազարյան: